Արձանագրություն 3

«ԳՀԾՁԲ-ԳՀԾ-ՁԻԱՀ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ձևով գիտական հետազոտությունների ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

Անցկացման վայրը՝ ք.Երևան, Աճառյան 2, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, 2-րդ հարկ, 207 սենյակ
Անցկացման օրը՝ 17 ապրիլի 2018թ.
Անցկացման ժամը՝ 16:00
Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Սոֆիա Գրիգորյան
Հանձնաժողովի անդամներ՝	Լիլիթ Հովհաննիսյան Արշակ Ասմարյան Վարդան Արզաքանյան Տիգրան Հովսեփյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Գևորգ Խանոյան

I. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին

(նախագահ՝ Սոֆիա Գրիգորյան)

Ընդունել ի գիտություն, որ

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցում ուղարկելուց հետո սահմանված ժամկետում (17.04.2018թ.) ստացել ենք եզրակացություն, համաձայն որի մասնակիցը՝ «ԴՐԱԿԱՆ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԱՆՑ» սոցիալական ՀԿ-ն չունի ժամկետանց հարկային պարտավորություններ և մասնակցի կողմից ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացված փաստաթղթերի գնահատման

թերթիկները, համակարգողն ամփոփեց ընթացակարգի մասնակցի հայտի գնահատման արդյունքները, ինչն արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում.

N h/h	Գնահատման չափանիշը	Գնահատման արդյունքը
		«ԴՐԱԿԱՆ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԱՆՑ» սոցիալական ՀԿ
1.	Մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ	համապատասխանում է
Ընդհանուր գնահատականը		**համապատասխանում է**

Հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջների համաձայն, «ԴՐԱԿԱՆ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԱՆՑ» սոցիալական ՀԿ-ի կողմից ներկայացված՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատել բավարար և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

N 1- N 10 չափաբաժինների համար «ԴՐԱԿԱՆ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԱՆՑ» սոցիալական ՀԿ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(նախագահ՝ Սոֆիա Գրիգորյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց.

ա) ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը, անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝	Ս.Գրիգորյան	(ստորագրություն)
Հանձնաժողովի անդամներ՝	Լ.Հովհաննիսյան	(ստորագրություն)
	Ա.Ասմարյան	(ստորագրություն)
	Վ.Արզաքանյան	(ստորագրություն)
	Տ.Հովսեփյան	(ստորագրություն)
Հանձնաժողովի քարտուղար՝	Գ.Խանոյան	(ստորագրություն)